

ՅԵՒՆՈՒԱԾ. • ԱՐԵՐԱԾԻ 1896 թ.
ՅՈՒՆՈՒԱԾ ԱՄՄԻ.

ՎԱՀԱՅՈՒԹԻՒՆԻ ՎԱՅՆ ՌԱՆԴԻԵԱՆ ՔՐԻՍՏՈՆ
ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԱԿԱՆՆ ԽՄԻԱՊԻՄ
ԱՌՈՒՐ Ի ՅՈՒՆՈՒԱԾԻ ՎԵՃԱ.

Ի ԿՂԵՄԱյ յառաքելասահման կանոնացն:

Կարգեցին առաքեալքն Տեառն զաւը
ծննդեանն Տեառն ի վեցն յունվարի:

Մակարիա Երուապեմայ Հայրապետին:

Մկրտութեանն խորհրդոյ յերիս տաւ-
նըս առաւել փափագեցին հարքն մեր՝ ի զա-
տիկն, ի պէնտակոսան, ի ծննդեանն և ի
մկրտութեանն, զսր ի միում առուր տաւ-
նեմք:

Յովհաննու Երուապեմայ Հայրապետին:

Կանոնք և սահմանք Եկեղեցւոյ՝ զա-
ւուրս և պահեսցեն ծերք և տղայք, ընդ
նմին զշաբաթ և զեկրակէ, և յորում առուր
զիսկեսցի կատարեսցին զաւը ծննդեանն և
մկրտութեանն Տեառն, վասն զի աստուա-
ծացինք են և փրկագործք:

Ներտառեա չոռմայ Հայրապետին:

Սահմանք ուղղափառութեան Եկեղեցւոյ յա-
ռաքելցն հաստատեալ. ի. աւր պահել կրա-
նաւորաց և ապաշխարողաց, և ը. աւր Հա-
մարէն ժողովուրդն, ընդ նմին զշաբաթ և
զմիաշաբաթ և զտաւն աստուածայացանու-
թեանն՝ զծննդեանն ասեմ և զմկրտու-
թեանն, վասն զի աստուածայինք են և փր-
կագործք. յորում առուր զիսկեսցի կատա-
րեոցեն:

Գրիգորի Աստուածաբանի:

Կարգեսցէ Եպիսկոպոսն իւրոյ Եկե-
ղեցւոյն ի զ. յունուարի զաւը ծննդեանն
Տեառն և մկրտութեանն, և ի ժ. փետր-
ուարի՝ զեկեալն ի տաճարն. Նորին. Երիս
ծնունդս գիտէ մեզ բանո, զմին՝ փշմամին.

Հոգի սուրբ Եկեսցէ ի քեզ, և ի քթթել ա-
կան բանն խաճնեաց իւր մարմին. և զմիւան
մարմնանալովն և մկրտութեամին: * Տեսա-
նեմ զծնունդն և զմկրտութիւն անրաժանե-
մի ասէ և զմիւան յարութեամին. և վերագրէ
զմառն ի յայտնութիւն Տեառն: Եւ սկսանի
թէ Քրիստոս ծնեալ լինի. և թէ Երեւեցաւ
Աստուած մարդ ծննդեամբ, և ի նոյն առուր
ասէ, մկրտութիւն է աւրս և պարտ է վաս-
տիկել: Որ ցուցանէ թէ ծնունդն Երեկունն
էր և մկրտութիւնն առաւաւառուն: Եւ այս
արար հարկ առաջին հարցն՝ առնել զծնուն-
դըն Երեկունն, որպէս զի Երեւեցի պատիւ
մկրտութեանն առ առաւաւառուն:

Սըբոյն Բարսոյի:

Անուն զիցուք տաւնիս աստուածայայտ-
նութիւն:

Հավողիտայ Եպիսկոպոսի:

Իննամսեայ Տէրն ծնաւ և Երեսնամեայ
մկրտեցաւ՝ ի նմին առուր ըստ Դուկայ. Եւ
Թիուս էր ամսց բրեւ Երեսնից, և յետ
սակաւոց զմկրտութենէն ճառէ: Փանզի
աննաման էր յայտում առուր ծնանել և յա-
լում առուր մկրտիլ, և թէրահաւատութիւն
ի մէջ արկանել՝ զի զայլ ծնեալ և զայլ մը-
կրտեալ ասէին. զի Երկու բնութիւնս և Եր-
եկուս որդիս խոստավանեցան, և այնու յեր-
եկուս տաւնս բաժանեցին որք անհնազանգք
էին: Խոկ Եկեղեցի հաստացելոց ի միում
առուր տաւնէ զտան ծննդեանն եւ մկրտու-
թեանն:

Սեբերիանոսի Եպիսկոպոսի ի Հուկասու
Ամետարանին մեկնութենէն:

Նախնիքն Երկուս աւրս ի շաբաթն պա-
հեցին, և զիշատակ սրբոցն յաւուրս յայ-
սոոիկ յառաջիկայօն անցուցին. բայց միայն
զաստուածայնոյն և զաստուածորդւոյն տաւն
ուր և հանդիպի կատարել, զի Աստուած է
և զամենայն լուծանէ՝ զծննդեանն ասեմ
և զմկրտութեանն ի միում առուր տաւնել.

* Եարունակութիւնը Երեւի մի ուրիշ հնդինակի է, որ
չէ չը բնրել Աստուածաբանի վկայութիւնը:

ի թղթին Մելիտոնի եպիսկոպոսի որ
առ եւսը եպիսկոպոսին:

Տաւնեմք ըստ աւետեաց հրեշտակին
թ. ամսեայ՝ զծնունդն. բ. աւրեայ՝ զմըլ-
փատութիւնն. երեսնամեայ՝ զմկրտութիւնն.
Եւ պատուել այսպէս զծնունդն և զմկրտու-
թիւնն ի միում աւուր տաւնել.

Դիպրիանոսի եպիսկոպոսի:

Քրիստոս ըստ մարմնոյ և ամ լցեալ,
յայսմ աւուր միրտի յորում և ծնաւ ի
սրբոյ կուսէն Մարիամոյ:

Մարութայի Նըփրտաց եպիսկոպոսի:

Եւ զայս ասեմ ոչ եթէ այլ և այլ են
տաւն ծննդեանն և միրտութեանն ծեառն,
այլ ի միում աւուր տաւնել պարտ է. բայց
գործը այլ եալ են, որ այսաւր պատահեցան:
Ի հարցաքննութեանց Ասորոց վարդապետաց:

Գարձեալ ասէ Ապահակ առ Աֆրիմ վար-
դապետն իւր. Եւ արգ՝ որպէս Հրամայեցեր
բազում անգամ, թէ ի զ. յունուարի ի
վերջին քանունն ծնաւ Որդին Աստուծոյ ի
կուսէն. Խոկ ընդէ՞ր տօնեն եկեղեցիք ի
գեկտեմբերի ի չէ, որ է առաջին քանուն:

Վարդապետն ասէ: Աշխարհն հռով-
մայեցւոց ի կապաշտութեանն արեգա-
կանն երկիրպատանէին և ի չէ, գեկտեմ-
բերի, որ է առաջին քանաւնն յորժամ
սկիզբն առներ տիւն ի գիշերէն՝ մեծաւ
ուրախութեամբ տաւնէին արեգականն և
հարսանիք արեգականն ասէին զաւըն
դայն: Խոկ յօրժամ ծնաւ Որդին Աստու-
ծոյ ի կուսէն զնոյն տաւն կատարէին
նոքա թէպէտ և գարձան ի կուցն յԱս-
տուծուած. և զայն աեսեալ առաջնարդայն,
և առին զտաւն ծննդեան Քրիստոսի որ էր
յունուարի զ.ն և եղին անգ, և խափա-
նեցին զտաւն արեգականն՝ զի ոչինչ էր որ-
պէս նախ ասացաք: Խոկ ծնունդն Քրիստոսի
ստոյգ յունուարի զ.ն է, որ է վերջին քա-
նունն որպէս գրեցին ոռուր առաքեալքն ի
գիրս կանոնացն յիշանել հոգւոյն: Զար ուս-
եալ երջանիկն զուկաս գրեաց յիւրում ա-

ւետարանն և ասէ. Յիսուս էր ամաց երես-
նից սկսեալ յաւրն յորում միրտեցաւ:
Քանզի մեծ խորհուրդ ունի զծնունդն և
զմկրտութիւնն ի միում աւուր տաւնել. զի
որպէս երկու բնութիւնն Աստուծոյն և մար-
դոյն միացան անշփոթ, նոյնպէս և բ.
տաւնքն ի մի հաստատեցան ի լինիլ հաւատ
եկեղեցւոյ որբոյ:

Ի կարնոյ կանոնացն, որ եղաւ հըրա-
մանաւ Յուստիանոսի:

Վասն մեծի յայտնութեանն, զոր կար-
գեցին առաքեալքն ի չ.ն յունուարի՝ ու-
րասութեամբ տաւնել ի փոստ Աստուծոյ:
Եւ որ այլ ազգ խորհի և չէ, գեկտեմբերի
ծնունդ առնէ հետեւելով Արտեմինի յԱս-
տուծոյ և ի սուրբ Ժողովայս նզովեալ եղի-
ցի. ամէն ամէն:

Վասն Արտեմինի:

Արտեմին յետ և ամի խաչելութեան
Տեառն՝ աշակերտեցաւ Յովհաննաւ աւետա-
րանին զամիս է. և ոչ եկաց հաստատուն
յուղիլ հաւատս. զորմ՝ ասէ Յովհաննէս.՝
ոմանք առ ի մշնջ ենին: Եւ յետ մահուան
սուրբ առաքելոյն՝ ասէ Արտեմին: Առա-
քեալքն Տեառն վասն նախանձու զծնունդն
ոչ ասացին, խոկ այժմ յայտնեցաւ ինձ և
ես ձեզ ծանուցանեմ: Եւ ընդհակառկո-
ւելեալ գրէ ընթերցուածու, և բաժանէ զիի
Քրիստոսն յերկուս բնութիւնս և յերկուս
որդիս, և կարգեաց երկուս տաւնս ըստ
երկուց որդւոյն. ի չէ գեկտեմբերի կարգէ
զծնունդն ի որբոյ կուսէն, և զծնեալն սոսկ
մարդ ասէ, և ի չ.ն յունուարի կարգէ ըղ-
մկրտութիւնն և զայն Բանին Հաւը ասաց,
և բաժանեաց զԱստուծած Բանն յիւր միա-
ցեալ և յաստուածացեալ մարմնոյն:

Ի թղթոյն Գրիգորի Արծրունեաց եպիսկո-
պոսի զոր զրեաց յԵղոսադեմայ ի չայր:

Արգ յետ և դ. ամի թագաւորու-
թեանն Յուստիանոսի կայսեր, կրկին մարտ
եղ սատանայ բնդ եկեղեցի, և փոխեցին
զուրբ հաւատն և այլայեցին զիարգ ե-

կելեցւոյ, զոր հաստատեալ էր սուրբ առաքելոցն: Քանզի եմուտ առ թագաւորն հըրէայ ուն հերձուածող և ասէ: Ընդէ՞ր ոչ առնեն երտւաղէմսցիքն զտաւն Տեառն ընդառաջին ըստ ծննդեանն և ոչ ըստ յայտնութեանն: Օրպէս և ամենայն երկիրս յանաց: Եւ զայտ լուեալ թագաւորն գրեաց վաղվալակիթուլիտ առ հայրապետ քաղաքին, որում անուն էր Յոստոս առնել զտաւն Տեառնդառաջին ըստ ծննդեանն և ոչ ըստ յայտնութեանն: Եւ յօյժ արտասուեաց հայրապետն ժողովրդականաւըն հանգերձ: Եւ երեւցաւ նշան յԱստուծոյ քանզի բշխեաց ջուր ի սիւնէն, որ ի սուրբ Միսան էր առաջի բազմութեանն և առաջի զաւրաց թագաւորին: և ամեներեան ետուն փառս Աստուծոյ: Եւ գարձեալ ի հայրապետութեան Տեառն Մակարաւ ի նոյն թագաւորէն եկն սաստիկ հրաման մահու ի քաղաքն երտւաղէմի թէ ոչ կատարեսցեն զտաւն Տեառնընդառաջին ըստ ծննդեանն և ոչ ըստ յայտնութեանն: Եւ բազմութիւն քաղաքին ետուն ի մահ զանձինս իւրեանց, ոչ առնել զկամծ թագաւորին: և զաւրե թագաւորին կամեցան սուրբ արկանել ի քաղաքն: Եւ յԱստուծոյ ինամոցն այլ նշան յայտնեցաւ. քանզի սուրբ Կոյսն Մարիամ տպաւորեցաւ ի նմին սիւնն որ ի սուրբ սիովն՝ ի գիրկո ունելով զՓրկիքն: և կայր յաջ Տեառն խաչ մեծ ծիրանի: և տեսին արդարք և մերաւը, և առջին բժշկեցաւ կին մի ի հայոց: Խոկ յետ մահուան Մակարաւ ընկալու քաղաքն զաղանգն:

Յովհաննիսի Հայոց կաթուղիկոսի:

Որ ծնունդ առնէ նախ քան զյայտնութիւն՝ սուրբ է, քանզի ծնունդն և յայտնութիւնն մի է և յայտ յընթերցուածոյն որ ասէ: Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս:

Պատրիարքն ասէ: Զաւետիքն նախ քան ծնունդն ընդէ՞ր ոչ առնեք:

Կոմիտաս Հայոց կաթուղիկոսն ասէ:

Զի ոչ ընկալուք յԱրտեմոնէ և ի Յոր-

նալէ, այլ ի Յակովայ և ի Կիւրդէ երուսաղէմացւոյ, արդ ժամէ քեզ մեղաղիք մինել Յակովայ, որ զաւետիքն ի ծննդեանն եդ: Քանզի մեր Պերուսաղէմին ընդունիմք, որպէս և գուք զՅորնաղին և զՅորեմնին: Բայց ի հակառակն եկեսցուք, ո՞ւ եցոյց տաւնել աշխարհի զաւետիքն: Քանզի հրեշտակն միոյ կուսի աւետեաց, և Մատթէոս ի բազում տեղիս յիշէ զծնունդն, և աւետեացն փոյթ ոչ առնէ: Մարիամ ընդ բանոն խոռվեցաւ և ունէր ի որտի իւրում և Յովէփ կամէր լուելեայն տրձակել զնա՝ և յերազի զաւետիքն ընդունիք, և այս ամենայն ի ծածուկի խոկ ի ծնունդն հրեշտակը և հովիւքն մագքն և ասողն:

Ի հաստոյ Թղթոյն Ստեփանոսի Սիմեաց եպիսկոպոսի, զոր զբեաց պատավանի Թղթոյն Անտիոքյ պատրիարքին:

Դարձեալ ասէք վասն կուսական աւետեացն, թէ մեք ոչ տաւնեմք: այն, տաւնեմք՝ և կարի քաջ: Օրպէս զծնունդն և զմկրտութիւնն ի միում աւուր տաւնեմք, նոյնպէս և զյարութիւնն և զաւետիսն: և եղեւ այսպէս: Քանզի յապրիլի Դպումն տէրունական չարչարանացն, ի Նոր թագումն, և ի Կ ն յարութիւնն: Եւ արգ՝ այն հրեշտակն, որ յապրիլի Վ ն զաւետիսն ետ կուսին նոյն գարձեալ զաւետիս յարութեանն ետ կանանցն իւղաքերից: Վասն որոյ ի փառս Աստուածածնի զյարութեան մեծացուցէք կատարեմք զեթն աւր խորհրդաբար: «Որ զաւետիս հոգւոյն» և այն: Եւ Յակովը և Կիւրեղ հրամայեցին, ընդ յարութեանն պատուել զաւետիսն և տոել մեծացուցէ: և ոչ կարգեցին զաւետիսն յընթերցուածն: և զայն որ յետոյ կարգեցաւ յԱրտեմոնէ և ի Յորնաղէ, ոչ ընդունիմք, և ոչ զայն որ բռնութեամբ եղաւ ի Մարկիանոսէ և ի Յուստիանոսէ:

Նեստոր ասէ:

Ծնունդ ընդէ՞ր ոչ առնեօ:

Կրամաստրն ասէ.

Յակոբոս, Կիւրեղ, Առտուածաբան և
Բարսեղ զերիս ծնունդն մի ասեն և հրա-
մայեցին առնել. ընթերցիր զիմ գրեալն և
տես թէ յուրանալ եմ. «որ ծնանելոցն է ի
քէն» և «ծնաւ ձեղ այսաւր Փրկիչ». և Յի-
սուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս, և
«ի ծնանելն Յիսուսի», և այլ ընթերցուածք
և սազմոսք:

Անանիայի Հայոց վարդապետի:

Եւ արդ տեսցուք դայն որ ասեն յոյնք,
թէ յորում աւուր պապանձեցաւ Զաքարիայ
ի նմին աւուր յղացաւ կինն նորա. և անոփ
թուեն. Ֆ աւր՝ որ բերէ ի իշխան մարտի զաւե-
տիքն. և ասոփի թուին աւուրս մհջ. որ բերէ
ի իշխան գեկտէմբերի զծնունդն: Բայց պա-
պանձումն Զաքարիայի ի ժ. թշրին ամսոյ է.
զի նա է է. երորդ ամիս և նա է աւր քա-
ւութեան. քանդի ասէ բնագիրն. Յամսեանն
եւթներորդի որ աւր մի կոչեցեալ՝ սուրբ Մի-
ցի ձեղ. և յայնս էր աւր քաւութեանն,
յորում մտանէր քաշանայապետն ի սրբու-
թիւն որբութեանցն մի անգամ ի տարուան,
և կայր առաջի մեծ տան տաղաւարահա-
րաւն և բոլոր խրայէլ անդ էր. զիարդ
գնայր նախ ի տունն առանց կատարման
տաւնին. նա և տունն նորա չէր յերուաս-
դէմ. և վկայ մեղ աւետարանին որ ասէ.
Երբե լցան աւուրք պաշտամանն. աւուրք
պաշտաման զտաւն քաւութեան և զտաւն
տաղաւարահարացն ասէ: Տեսանեն կատա-
րեցան ասէ աւուրքն, և ապա գնաց ի տուն
իւր և յղացաւ կինն նորա: Զի թէ հասա-
րակաց ժողովրդեանն սրբէլ հրամայեն աւ-
րէնքն յառաջ քան զտաւնն և յամսամուսն
ո՞րչափ ևս առաւել նա՝ որ գլուխ էր
տաւնին. և այս անհաւատալի է, որ նա ի
մէջ երկուց տաւնիցն երթայր ի տուն իւր
և մերձենայր ի կին իւր: Եւ արդ պարտ է
հաւատալ աստուածայնոց գրոց ի ժ. թշրին
ամսոյ զպապանձումն որ է ի իշխան սեպում:

Երբիւ և ի իշխան մերձաւորութիւնն և յղու-
թիւնն Եղիսաբէթիւ որ լինի ի վեց ամսոյն
աւուրքն Ֆ. աւր. որ ցուցանէ ֆւն-ն նիսան
ամսոյ, որ լինի ի պարէլի կաւսին աւե-
տիքն ըստ հռոմայեցոցն. և թուեալ ժ-
ամսեայ աւուրք յղութեան կուսին՝ կատա-
րի մհջ. աւրն ի խաւ արէթ ամսոյ որ է պա-
տուարի. աստ կացցուք հաստատուն-
Պուկաս ասէ. Յիսուս էր ամաց Հիսոց սկզ-
եալ: Ակսեալ սկիզբն առնելին է երեսնամեայ
կատարեալ հասակին և վարդապետութեանն.
որ ցուցանէ իշխան յունուարի լինել մկրտու-
թեանն յորում և ծնաւ ի կուսէն: Յակով-
բոս որ քաջ գիտէր, ի պատուարի գը-
րէ զյայտնութիւնն և կարգէ յլնթերցուա-
ծին: Միաբանի նմա և Կիւրեղ Երուսաղէ-
մացին. քանդի ասէ Կիւրեղ, թէ յայլ քա-
զաքս Հետեւեցան Արտեմոնի և Հայք միայն
գտան յառաջին կարգին. և ի իշխան գեկ-
տեմբերի, Գաւթի և Յակովբայ տաւնեմք:

Ի հաւատոյ թղթին Ներսէսի վերջնոյ Հայոց
կաթողիկոսի որ առ Մանիկ թագաւորն
Յոնաց:

Է և այս աւանդութիւն Հայոց ի
նախնեացն սկսեալ՝ զտաւն ծննդեանն և
մկրտութեանն ի միում աւուր տաւնել. և
այս ոչ է վայրապար: Քանդի ամենայն եկե-
ղեցիք ի սկզբանն նոյնագէս կատարէին. որ և
այս գիտելի է ձերում իմաստութեանց,
թէպէտե յետոյ յերկուս բաժանեցին զմի
տօնն: Խակ մեք զաւանգեալն մեղ ի սրբոյն
Գրիգորէ հաստատուն պահեցաք, ըստ Վու-
կայ որ ասէ, թէ յետ աւուրցն այնոցիկ
գնաց ի տունն իւր Զաքարիան և յղացաւ
Եղիսաբէթ. և տեսիլն և պապանձումն յա-
ռաջին աւր տաւնի քաւութեանն էր:

